ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Լեռնամերձի հիմնական դպրոց »

Առարկա՝ Պատմություն

Թեմա՝ Օրվա դասի պլանավորումը՝ արդյունավետ դասավանդման կազմակերպման միջոց:

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Ուսուցիչ՝ Վարդուհի Ոսկանյան

2023թ.

Բովանդակություն

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… 3

2.ԻՆՉ Է ԴԱՍԸ.....……4

3.ԻՆՉ Է ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ…… .....…6

4.ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ……8

5.ԴԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐ…… .....…16

6. ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ……20

7. ԴԱՍԻ ՊԼԱՆԻ
ՕՐԻՆԱԿ…… 22

8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……24

9. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…… ..... ……26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեշտ է ճիշտ հետևել նրան, ով առջևում ճիշտ է ընթանում: Առանց օրինակի ոչինչ չես սովորի:

Կոմենսկի

Չեխ ականավոր մանկավարժագետ Յան Ամոս Կոմենսկին առաջինն էր, որ տվեց իր վերջնական տեսական և գործնական մշակումը. իրականացրեց ուսուցման կազմակերպման ձևը՝ դաս - դասարանային համակարգի վերաբերյալ: Այդ ձևը այսօր էլ գերիշխում է ողջ աշխարհում. իր համակարգում ունենալով դասարան, ուսուցիչ, դասագիրք, դաս և այլ միավորներ: Դասերի որակով է պայմանավորված աշակերտների վերաբերմունքը ուսման նկատմամբ: Դպրոցի ոչ մի այլ աշխատանք, ինչքան էլ կարևոր լինի ու կատարվի բարձր որակով չի նպաստի ուսումնադաստիարակչական գործընթացի գրագետ իրականացմանը, եթե դասերը բարձրորակ չեն: Իսկ այստեղ հարցէ ծագում, որն է բարձրորակ դասը, ինչ անել, որ հասնել դրան: Մի շարք գիտնականների, ուսուցիչների հետազոտական որոնումներից պարզ դարձավ, որ դրան կարող են հասնել միայն ճիշտ և գրագետ դասապլանավորման միջոցով: Այս աշխատությանս մեջ կփորձեմ խոսել դասի, դասերի պլանավորման, արդյունավետ հնարների կիրառման մասին, և թե որքան մեծ նշանակություն ունի դասի գրագետ պլանավորումը, որը բխում է արդի մանկավարժագիտության պահանջներից ու խնդիրներից

Ի՞ՆՉ Է ԴԱՍԸ.

Դասը մանկավարժական գործընթացի հիմքն է: Ուսուցման կազմակերպման հիմնական ձևը: Սովորողների կրթության, զարգացման և դաստիարակչական խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Տարբեր սահմանումներ կարելի է տալ կամ օրինակ՝ միևնույն տարիքային խմբի, կրթության կազմակերպման ձևն է, կոնկրետ օրակարգով (դասացուցակ) և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Կրթադաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն, դրանից բխող դիդակտիկ տարրեր, ներդրված են այս ձևի մեջ: Յուրաքանչյուր առարկայի դասն անցկացվում է ուսումնական ծրագրի համաձայն: Ուսուցիչը դասը նախապատրաստում և վարում է դիդակտիկայի սկզբունքներով: Ավելի լայն իմաստով դասը սովորողի կողմից նախկինում անծանոթ առարկայի մասին պատկերացում կազմելուն ուղղված գործընթացն է: Արդի մանկավարժության մեջ ներկայացվում են դասերի հետևյալ տիպերը.

1. Նոր նյութի հաղորդման դասեր. սովորողների կողմից նոր նյութի յուրացումն է, որին տրամադրվում է դասաժամի մեծ մասը: Դասի ընթացքում կարող են գործածվել այնպիսի եղանակներ, ինչպիսիք են դասախոսությունները, բացատրությունները, առանձին հարցերի շուրջ զրույցները, քննարկումները, ինքնուրույն աշխատանքները և այլն:

2. Կարողությունների ու հմտությունների ձևավորման և ամրապնդման դասեր (հիմնական ձևերն են. գործնական, ինքնուրույն, լաբորատոր աշխատանքները և դաս սեմինարները):

3. Գիտելիքների ու կարողությունների ստուգման և շտկման դասեր (ստուգողական գրավոր աշխատանքներ, շարադրություններ, փոխադրություններ):

4. Համակցված դասեր (1դասաժամի ընթացքում հնարավոր է լուծել մի քանի դիդակտիկական խնդիրներ, գիտելիքների ստուգում, նոր նյութի հաղորդում, ուսուցվող նյութի շուրջ որոշակի աշխատանքների կազմակերպում և այլն)

Ի՞ՆՉ Է ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասի համար ընտրված նպատակը, եթե այն ձևական չէ և գիտակցված ու ընդունված է ուսուցչի կողմից, ամբողջությամբ իրեն է ենթարկում դասի ուղղվածությունը և թելադրում որոշակի եղանակներ ու միջոցներ։

Դասանպատակն է օգնում ուսուցչին պարզելու իր դասի արդունավետության մակարդակը, բացահայտելու սխալները և կատարելու համապատասխան շտկումներ։ Անտեսել դասի նպատակը, նշանակում է հստակ չպատկերացնել կազմակերպվող ուսումնական գործունեության վերջնական արդյունքը, որը ոչ մի լավ բան չի խոստանում:

Այսպիսով բոլոր հիմքերը կան պնդելու, որ նպատակը դասի անհրաժեշտ օղակն է, և դասի արդյունավետությունը պայմանավորված է նրա ճիշտ և հստակ որոշմամբ ու ձևակերպմամբ:

Մանկավարժագիտության մեջ դասը պետք է ունենա կրթական դաստիարակչական և զարգացման նպատակներ։ Կրթական նպատակը՝ դա հասարակական- քաղաքական, հումանիտար, բնագիտական, մաթեմատիկական, աշխատանքային և այլ գիտելիքների աշակերտական յուրացումն է։ Ինչպես և յուրաքանչյուր ուսումնական առարկային հատուկ կարողությունների և հմտությունների աշակերտական տիրապետումը:

<u>Դաստիարակչական նպատակը</u>- աշակերտների գաղափարաքաղաքական, բարոյական, ֆիզիկական, էսթետիկական և աշխատանքային դաստիարակությունը իրենց փոխկապակցման մեջ:

<u>Զարգացման նպատակը</u>- աշակերտների ինտելեկտի, կամքի, հույզերի, իմացական հետաքրքրությունների և ընդունակությունների, ստեղծագործակա հնարավորությունների զարգացումը, ինչպես և մոտիվների ու պահանջմունքների ձևավորումը:Այսպիսով արդյունավետ դասը պետք է լինի եռանպատակ:

Նպատակը երևակայությամբ ստեղծված արդյունքն է, որին ձգտում է մարդը, իսկմոտիվը այն, ինչը, որ դրդում է դնել այս կամ այն նպատակը և իրականացնել գործողություններն ու վարքը։ Բ.Մ.Տեպլով

Մոտիվ, խթան ասելով էլ հասկանում ենք դասապլանավորման գործունեությունը։

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Դասապլան կազմելիս չպետք է մոռանալ աշակերտների անհատական առանձնահատկությունների մասին, աշակերտական գործունեության, նրանց նպատակների իրականացման մասին, որտեղ մեծ դեր ունի ուսուցչի գործունեությունը և ինչ խոսք ճիշտ ու գրագետ կազմված դասապլանը: Դասը, որն անցկացնելու է ուսուցիչը (նա ազատ է իր ընտրության հարցում մնում է ճիշտ պլանավորել) պետք է լինի հնարավորինս պարզ , մատչելի , հասանելի բոլոր աշակերտներին՝ անկախ նրանց կարողությունների մակարդակներից: Ցանկացած հանձնարարություն կապված դասի թեմայի հետ դասարանում սովորող բոլոր աշակերտները պետք է ի զորու լինեն իրականացնելու (այլապես չստացվելու դեպքում հնարավոր է ուշադրության պակաս, հիասթափություն լինի և ուսուցիչը չհասնի իր ցանկալի և պատկերացրած վերջնարդյունքին):

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ մտավոր գործունեության ակտիվությունը, նյութի հետ ծանոթացմանը զուգահեռ ավելանում է՝ եթե պահպանվում են հետևյալ պայմանները:

1. Առաջադրված խնդիրը աշակերտին մղում է որոշակի մտավոր հնարքի կիրառման:

2. Բոլորն ունեն տվյալ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ և տվյալ հնարքի կիրառման հմտություններ:

3. Խնդիրը, երբ համապատասխանում է նյութի բովանդակության հետ, գնալով ակտիվացվումէգործունեություն Ուսուցիչների մասնագիտական ամենակարևոր որակներից մեկը համարվում է դասի պլանավորումը: Երբ ուսուցիչը գիտակցում է իր դասի խնդիրներն ու նպատակները, ճիշտ ձևով է պլանավորում դասապրոցեսը՝ ինչն էլ կարող է մեծապես նպաստել ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Միայն հետևողական աշխատանքի շնորհիվ ձեռք կբերենք դասի պլանավորման կարողություններ: Դասերը պլանավորելուց առաջ ուսուցիչը պետք է ինքն իրեն այս հարցերը տա՝

- Ի՞նչ սովորեցնել
- Ինչո՞ւ սովորեցնել
- Ինչպե՞ս սովորեցնել

Դասն արդյունավետ կլինի, եթե այն պլանավորելուց առաջ ուսուցիչն ունենա նաև հետևյալ հարցերի պատասխանները:

1. Ինչպես պետք է պարզեմ սովորողների նախնական գիտելիքները: Ինչպես կարող եմ օգնել սովորողներին գնահատելու այն, ինչ իրենք արդեն գիտեն կամ կարող են անել տվյալ նյութի հետ կապված: Ինչպես կարող եմ օգնել նրանց արդեն ունեցած գիտելիքների հիմքի վրա նոր գիտելիքներ կառուցելու, ինչպես նաև՝ չիմացածը բացահայտելու, պարզելու գործում:

2. Ինչ պետք է կարողանան անել սովորողները դասի ընթացքում ձեռք բերած գիտելիքների շնորհիվ: Ինչ չափով են դասի նպատակները բխում չափորոշիչներից:

3. Ինչպես են սովորողները ցուցադրելու այն, ինչ գիտեն և կարող են անել: Գնահատման ինչ չափանիշներ են կիրառվելու:

4. Ինչպես են մատուցվելու նոր գիտելիքները ներկայացվելու հմտությունները: Հաշվի առնելով սովորողների ունակությունների տարբերությունները՝ որն է լինելու նոր նյութը ներկայացնելու եղանակների ու միջոցների լավագույն ընտրությունը՝(կախված աշակերտական կազմի հետ, թվաքանակով քիչ են, թե շատ: ԿԱՊԿՈՒ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, որպեսզի ուսուցիչը տեսնի իր առջև ծառացած խնդիրներն ու փորձի արդյունավետ լուծումներ տալ):

5. Ինչպես կարող եմ սովորողների համար ավելի դյուրին դարձնել նոր գիտելիքի (տեղեկատվության) ընկալումը կամ գործողությունների մշակումը: Որոնք են հիմնական հարցերը, գործողությունները կամ հանձնարարությունները, որոնք կիրառվելու են դասի ընթացքում: (Այստեղ ավելի շատ օգնության են գալիս նոր տեղեկատվական տեխնոլոգիական միջոցները, որոնց շնորհիվ ավելի պարզ կդառնա ցանկացած առարկայի թեմա, նյութ):

6. Ինչպես եմ դասի ընթացքում ստուգելու սովորողների կողմից նյութի ընկալումը՝ ստուգիչ հարցեր, թեստեր, գրավոր, բանավոր առաջադրանքներ, խաղեր, մրցույթներ բազմաբովանդակ և այլն:

7. Ինչպես եմ հնարավորություն տալու սովորողներին՝ իրական կյանքի հետ կապեր ստեղծելու և կիրառելու մտածողության բազմազան և բարդ հմտություններ, որոնք անհրաժեշտ են դասի ընթացքում և դրանից դուրս հաջողության հասնելու համար: (կարող ենք կիրառել ուսուցման արդյունավետ հնարներ, որի մասին դեռ կխոսեմ):

8. Ինչ է անհրաժեշտ անել ուսումնական միջավայրում հարմարվելու և ուսուցման արդյունավետության հասնելու համար:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Դասի սկիզբը

1) Գրավել սովորողների ուշադրությունը խթանել հետաքրքրությունը և ապահովել մասնակցությունը:

2) Կապել հաղորդվելիք ուսումնական նյութը սովորողների ունեցած փորձի հետ:
3) Սահմանել դասի վերջնարդյունքը;

4) Նախապես մտածել և պլանավորել դասի կառուցվածքը:

5) Հնարավորինս բարձրացնել սովորողի շահագրգռվածությունը (մոտիվացիան):

Կարելի է՝

ա. սկսել՝ տվյալ թեմայի վերաբերյալ մի անսովոր փաստ բերելով,

բ. տալ զարմանալի և հետաքրքրական վիճակագրական տվյալներ, եթե այդպիսիք կան.

ցույց տալ որևէ ուշագրավ պատկեր, նկար,

դ. գրատախտակին գրել թեմային առնչվող բառակապակցություն կամ որևէ միտք,

ե. բաժանել հարցաթերթիկներ՝ առանց մեկնաբանության

զ. տալ «սադրիչ» խթանող, ներգրավող հարց

2) Կապել հաղորդվելիք ուսումնական նյութը աշակերտների ունեցած փորձի հետ:

ա. Օրինակներ բերել անցածից՝ հնարավորինս կապելով դրանք օրվա դասանյութի հետ:

բ. Հաշվի առնել սովորողների՝ տվյալ նյութից արդեն ունեցած գիտելիքները և այն հմտությունները, որոնք ձեռք են բերել անձնական փորձի շնորհիվ:

գ. Առաջարկել հիշել ցանկացած դեպք իրենց կյանքից, որն այս կամ այն կերպ առնչվում է նյութի հետ:

Օրինակներ.

Նախորդ դասին մենք քննարկեցինք .....

Այսօր տեսնենք, թե ինչպես կարող ենք.....

Այսօր մեր առաջին դասն է...մասին.....

Կարող եք հիշել մի դեպք ձեր կյանքից, երբ դուք էլ.....

Դասի վերջնարդյունք

Դասի հենց սկզբից սովորողների համար պետք է պարզ լինի՝

ա)ինչ են անելու դասի ընթացքում

բ)ինչ նոր բան են իմանալու կամ կարողանալու անել դասի ավարտին:

3) Դասի կառուցվածքը

Սովորողները կուզենան իմանալ, թե ինչ են անելու դասի ընթացքում, որը կօգնի նրանց տրամադրվել դասին և առավել արդյունավետ աշխատել։

Օրինակ. Այսօր մենք ծանոթանալու ենք Ա. Տիգրանյանի « Անուշ» օպերայի հետ, մենք նախ կկարդանք լիբրետոն, ապա միասին կքննարկենք թե քանի գործողություններից է կազմված օպերան, այնուհետև դուք գրավոր աշխատանք կգրեք, թե յուրաքանչյուր գործողությունում ինչ իրադարձություններ են տեղի ունենում, այսօր արիաներին չենք անդրադառնա,սակայն հաջորդ դասին շատ հետաքրքիր հանձնարարություն է ձեզ սպասվում, (ստանձնելու եք դերեր և խաղալու եք Անուշ օպերան):

4) Շահագրգռվածության (մոտիվացիա) բարձրացում

Երբ սովորողները բավարար դրդապատճառ չեն ունենում և չեն կարողանում ստացած տեղեկությունը կապել կյանքի հետ կամ չեն տեսնում դրա օգտակարությունը, ապա

հաճախ իրենց հարց են տալիս. « Իմ ինչին է այս ամենն իմանալը»: Այդ պարագայում կարևոր է սովորողին բացատրել հենց սկզբից, թե «իր ինչին է պետք» այս կամ այն գիտելիքը:

Դասի ներածության ընթացքում սովորողների շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով ուսուցիչներին կարող են օգտակար լինել որոշ առաջարկներ.

ա. Թեման գրավիչ ներկայացնելու համար ավելի հուզական վերաբերմունք դրսևորել դրա նկատմամբ:

բ. Բերել օրինակներ, ցույց տալ իրադրություններ, երբ տվյալ գիտելիքը, կարողությունն ու հմտությունը որևէ մեկին օգնել է, ասենք որևէ աշխատանքում:

գ. Բացատրել. թե ինչպես կարող է տվյալ նյութն օգնել լուծելու կենսական կամ աշխատանքային որևէ խնդիր:

դ. Կապել նյութն այլ ուսումնական առարկաների հետ:

ե. Ցույց տալ նյութի բովանդակության կարևորությունը:

զ. Օգտագործել գլուխկոտրուկներ, խաչբառեր և այլ միջոցներ. սովորողների լսելու, մտապահելու և ըմբռնելու կարողությունները ամրապնդելու համար:

է. Օգտագործել հետաքրքիր և տպավորիչ դիդակտիկ նյութեր:

Ներածության տևողությունը

Հաճախ քննարկվում է, թե որքան ժամանակ է պետք տրամադրել դասի սկզբնական մասին (ներածությանը): Այստեղ խիստ կանոններ չկան, այնուամենայնիվ, դասի 45 րոպեից կարելի է ներածությանը տրամադրել մինչև 10 րոպե:

Հիշել, որ ճիշտ կազմված ներածությունը՝

ա. Կոտրում է «սառույցը» (դասի սկզբում նկատելի դժկամությունը):

բ. Դյուրին և արդյունավետ է դարձնում սովորելու գործընթացը: գ.

Բարձրացնում է սովորողների սովորելու դրդապատճառը: 2. Դասի

հիմնական մասը

Դասի այս մասում իրականացվում է նյութի հիմնական ուսուցումը։ Այս փուլում երկու կարևոր խնդիր կա, հասցնել նյութի բովանդակությունը սովորողներին և կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կապահովեն սովորողների գործուն մասնակցությունը գիտելիքի ձեռքբերման գործընթացում:

Նախապես պատրաստել այն ամենը, ինչն անհրաժեշտ է դասն արդյունավետ վարելու համար, օրինակ՝

. նկարներ

. օժանդակ նյութեր

. գրքեր

. գծապատկերներ

. թուղթ ու գրիչ:

Քայլ առ քայլ պլանավորել այս փուլում սովորողների գործունեությունը։ Ցանկալի է, որ նախապես պլանավորենք յուրաքանչյուր առաջադրանքին հատկացվող ժամանակը՝ րոպեներով:

3. Եզրահանգում

1) Վերջնարդյունք

Մի քանի բառով ամփոփենք դասի վերջնարդյունքը և որոշենք իսկապես հասել ենք արդյունքի : Դա կարելի է պարզել՝ դիտարկելով սովորողների վարքը կամ նրանց հարցեր տալով (Տվյալ բաժնում կարելի է անդրադառնալ սովորողների առաջադիմության, ուսուցման արդյունքների գնահատման հարցերին):

2) Հետադարձ կապ

Սա երկկողմանի գործընթաց է, որը սովորաբար սկսվում է ուսուցչից , երբ նա հայտնում է իր նկատառումները առանձին սովորողների կամ խմբի վերաբերյալ։ Հետադարձ կապը խմբի կամ առանձին սովորողի հետ կարող է խրախուսող և շահագրգռվածությունը բարձրացնող դեր ունենալ:

Օրինակ՝

Դուք շատ արդյունավետ խմբային աշխատանք կատարեցիք։ Ձեր տված պատասխանները ցույց են տալիս, որ հասկացել եք դասավանդված նյութը. . . . և այն:

3) Ապագա դասերը

Փորձենք կապել սովորողների այսօրվա սովորածը հաջորդ դասի թեմայի հետ և, եթե հնարավոր է՝ հետագայում այսօրվա սովորածի կիրառման հնարավորությունների հետ.

ա. Եթե մենք սովորողների առջև բացում ենք ապագայի հետ կապված հնարավորությունները, ապա օգնում ենք նրանց հանգելու այն մտքին, որ այսօրվա սովորածը վաղվա հաջողության գրավականն է:

բ. Դասի պլանի ներածության և եզրահանգման մասերը կարող են շատ ընդարձակ լինել, որովհետև դրանք արտացոլում են ուսուցչի այդ պահին ծագած մտքերը։ Յուրաքանչյուր ուսուցիչ ինքն է որոշում, թե ինչ մանրամասնությամբ պետք է գրի առնի դրանք:

գ. Փորձառու ուսուցիչը կարող է բավարարվել գրի առնելով միայն մի քանի առանցքային բառեր կամ արտահայտություններ, որոնք կուղղորդեն նրան դասի ժամանակ։ Իսկ

սկսնակ ուսուցիչների համար շատ օգտակար է գրանցել բոլոր մտքերն ուգաղափարները, որոնք նա ուզում է արտահայտել կամ իրականացնել իր դասի ընթացքում:

ԴԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Դասին ներկայացվող ժամանակակից պահանջները որոշվում են դպրոցի խնդիրներով, ուսուցման օրինաչափություններով ու սկզբունքներով (Բարանսկի 1986) բաժանվում են երեք խմբի՝ կրթական, դաստիարակչական ու կազմակերպչական

1. Կրթական - ուսուցման արդյունավետ մեթոդներ, հնարներ

2. Դաստիարակչական – սովորողների, ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների հիման վրա ձևավորվում է նրանց գիտական աշխարհայացքը, դաստիարակվում և ձևավորման նրանց հայրենասիրական, հումանիստական զգացմունքները, բարոյական որակները, գեղագիտական ճաշակը սովորողներին և այնպիսի մեթոդներ կիրառել, որոնց դեպքում սովորողները ամենագործուն մասնակցությունը կունենան գիտելիքի ձեռքբերման գործընթացում:

Կշռադատման փուլում անհրաժեշտ է ամփոփել, հնարավորություն տալ սովորողներին արժևորել, օգտագործել, կիրառել իրենց սովորածն ու յուրացրածը:

Ուսուցչի խնդիրն է ճիշտ օգտագործել սովորողների ուժերը և հնարավորություն տալ նրանց կիրառելու ստացած գիտելիքները:

Փոխներգործուն մեթոդներով դասի կառուցվածքի առանձնահատկությունները

Ժամանակակից կյանքն իր պահանջներն է դրել կրթական համակարգի առջև և փոփոխության ենթարկել նրա բազմաթիվ կողմնորոշիչներ: Այսօր արդեն ոչ մի կասկած չի հարուցում ուսումնական գործընթացի ակտիվացման պահանջը:

Ուսուցման գործընթացում յուրաքանչյուր սովորողի գործուն մասնակցություն. սա է այն խնդիրը, որն այսօր դրված է դպրոցի առջև, ընկած է ուսուցչի աշխատանքի հիմքում: Ուսուցման գործընթացը պետք է իրականանա բոլոր սովորողների մշտական գործունեության և համագործակցության պայմաններում: Հենց այս դրույթն էլ ընկած է

փոխներգործուն ուսուցման հիմքում, վերջինս ենթադրում է երկխոսություն, որի ընթացքում էլ կայանում է համագործակցությունը ինչպես սովորողների, այնպես էլ սովորողների և ուսուցչի միջև, նման դասերը որպես կանոն ունեն հետևյալ կառուցվածքային պատկերը.

1. Մոտիվացիայի խթանման փուլ, այս փուլի նպատակն է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել ուսումնական նյութի շուրջ, առաջացնել հետաքրքրություն դրա նկատմամբ:

2. Դասի թեմայի և ակնկալվող արդյունքների ներկայացում, այս փուլի նպատակն է սովորողներին տեղյակ պահել դասի ընթացքում իրենց գործունեության բովանդակության մասին, երբեմն շատ օգտակար է, երբ դասի վերջնարդյունքը գրվում է գրատախտակին և դասի ամբողջ ընթացքում այն տեսանելի է:

3. Անհրաժեշտ տեղեկատվության հաղորդում, սովորողներին տալ բավարար տեղեկատվություն, որպեսզի դրա հիման վրա կարողանան կատարել առաջադրանքները:

4. Փոխներգործուն վարժություն, դասի հինական մասը, ուսումնական նյութի արդյունավետ ընկալումն է դասի նպատակների իրականացումը, որը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ,

ա) հրահանգավորում,

բ) առաջադրանքի կատարում,

գ) առաջադրանքի իրականացում,

դ) կատարած աշխատանքի արդյունքների ներկայացում,

ե) ամփոփում, արդյունքների գնահատում:

Ըստ այդմ ուսուցիչը պետք է.

1. Կիրառի սովորողների տարիքին, նմանատիպ մեթոդներով աշխատելու փորձին համապատասխան մեթոդներ
2. Ընտրի այնպիսի փոխներգործուն առաջադրանքներ, վարժություններ, որոնք

կնպաստեն սովորողների կողմից նյութի ընկալմանը

3. Հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի աշխատելու տեմպը, կարողությունները

4. Յուրաքանչյուր դասի ընթացքում կիրառի մեկ երկու փոխներգործուն մեթոդ

5. Փորձառություն չունեցող դասարաններում պետք է սկսել պարզագույն մեթոդների և աշխատանքի ձևերի կիրառությունից:

6. 3. Կազմակերպչական պահանջներ – խնդիր են դնում ճիշտ կահավորել դասը, արդյունավետ օգտագործել դիտազննական պարագաները, ուսուցման տեխնիկական միջոցառումները, կարողանալ վերլուծել սեփական վարած դասը, գտնել թերությունները, փնտրել նոր ուղիներ՝ դրանք վերացնելու համար։

7.

8. Ժամանակակից դասի կառուցման շատ արդյունավետ ռազմավարություն է դասի եռաստիճան մոդելը՝ ԽԻԿ (խթանում, իմաստի ընկալում, կշռադատում) համակարգը։ Այն խիստ արդյունավետ ձև է՝ դասը ճիշտ պլանավորելու և արդյունավետ իրականացնելու համար։ Այս համակարգի կիրառումը հնարավորություն է ընձեռում իրականացնելու ուսումնական տարբեր գործողություններ, որոնք էլ իրենց հերթին օգնում են ուսուցչին ուղղորդելու սովորողին ակտիվացնելու նրանց մտածողությունը, արդյունավետ քննարկումներ ծավալելու և այլն:

9. ԽԻԿ համակարգը ներառում է դասի ընթացքի երեք փուլ՝ խթանման, իմաստի ընկալման և կշռադատման:

10. Խթանման փուլի նպատակն է սովորողների ուշադրությունը կենտրոնացնել դասավանդվող նյութին, խթանել նրանց հետաքրքրությունը։ Այս փուլում ուսուցչի առջև դրվում են հետևյալ խնդիրները.

11.

12. . սևեռել աշակերտի ուշադրությունը, շարժել հետաքրքրությունը և ուղղորդել մտածողությունը տվյալ թեմայի շուրջ,

13. . հիշեցնել, վեր հանել նախորդ գիտելիքները,

14.

15. . կապել արդեն ունեցած գիտելիքները նորի հետ,

16.

17. . գտնել խթանումն իրականացնող արդյունավետ մեթոդներ և հնարներ;

18.

19. Իմաստի ընկալման փուլում իրականացվում է ուսուցանվող նյութի բովանդակության ընկալումը: Այս փուլում երկու կարևոր խնդիր կա, հասցնել նյութի բովանդակություն

ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Արդյունավետ դասավանդման նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը, կարևոր է, որ ուսուցիչը լավ պատկերացնի դասն ամբողջությամբ, հստակ գիտակցի դասի նպատակը, ուր ենք ուզում հասնել, ինչ ուղիով, ինչ միջոցներով:

Այստեղ կարևոր մաս է կազմում նաև դասասենյակի համապատասխանեցումը տվյալ դասի պահանջներին: Ստորև բերված հարցերը կօգնեն ուսուցչին ավելի հստակ գնահատել դասին իր պատրաստ լինելը և բարելավել դասի պլանը:

1.Որքանով են իմ ակնկալիքները ու սպասումներն իրատեսական,

2 Ինչպես կարող եմ համոզվել, որ սովորողները պատրաստ են առաջադրանքի կատարմանը,

3.Ինչպես պետք է կառուցեմ առաջադրանքը:

4.Որքանով են իմ ակնկալիքներն իրատեսական ժամանակի առումով:

5.Ինչպես կարող եմ գնահատել սովորողների կողմից հմտությունների ձեռք բերումը;

6.Ինչ եմ ուզում, որ սովորողները զգան: Դասի հինգ քայլով պլան.

Քայլ 1. Դասի սկիզբ՝ խթանում - ինչ են սովորելու աշակերտները : Ինչու է դա կարևոր, ինչպես է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ:

Քայլ 2. Նոր նյութի ներկայացումը - ինչ են սովորելու աշակերտները: Ինչպես են սովորում այդ նյութը : Որոնք են ներկայացվող նյութի կարևոր դրույթները:

Քայլ 3.Ուղղորդված գործնական աշխատանք- ինչ հնարավորություն է տրվում աշակերտներին համագործակցված աշխատելու, ուսուցչի օգնությամբ կատարելու գործնական աշխատանք տրված նոր նյութի վերաբերյալ:

Քայլ 4. Ինքնուրույն աշխատանք իմաստավորում-ինչպես է հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու: Ինչպես են աշակերտները ինքնուրույն կիրառում օրվա սովորածը :

Քայլ 5. Դասի ավարտ - ամփոփվում են դասի կարևոր մասերը : Անհրաժեշտության դեպքում տրվում են տնայի արտադասարանային աշխատանքներ:

Կարևորում ենք այստեղ երեք սկզբունք.

1.Ես եմ անում-ուսուցիչը բացատրում է նոր նյութը

2.Մենք ենք անում-ուսուցիչ աշակերտ միասնական աշխատանք

Դու ես անում- աշակերտներն ինքնուրույն աշխատանք են կատարում

5 ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

Դասի պլան

Դպրոց- Լեռնամերձի հիմնական դպրոց

Ուսուցիչ- Վարդուհի Ոսկանյան

Առարկան- Հայոց պատմություն

Դասարան-7-րդ

Դասի թեման- Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն

Դասի նպատակը՝

•Զարգացնել Հայաստանի քրիստոնեացման պատմության վերաբերյալ գիտելիքներ:

•Ձևավորել քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը հայոց պատմության մեջ գնահատելու և արժևորելու հմտություններ:

Վերջնարդյունք. սովորողը կկարողանա

•Ներկայացնի քրիստոնեության ծագումը , քրիստոնեության վարդապետության հիմքերը, Հայաստանում քրիստոնեության տարածումը:/ գիտելիք/

•Նկարագրել Հայոց եկեղեցու վարչական կառույցը

/ հմտություն/

•Արժևորի Հայաստանն իբրև առաջին քրիստոնյա պետություն: / արժեք/

•Գնահատի քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը:/ վերաբերմունք/

Դասի ընթացք.

•Սկիզբ- Մտագրոհի միջոցով տեղեկություն տալ նոր դասի մասին:

•Ընթացք- Կազմել 4 հոգուց բաղկացած խմբեր ։ Խմբերին ներկայացնել հանձնարարությունը։ Կիրառել կիսատ նախադասության մեթոդը։

Ես այսօր սովորեցի……

Ինձ զարմացրեց…..

Ինձ հետաքրքրեց….

Մի բան , որ չհասկացա….

Այս դասից ավելին կսովորեի, եթե….

Ավարտ- Բանավեճ

Բանավեճի միջոցով վերհանել քրիստոնեության դրական և բացասական ազդեցությունը։

Գնահատում- Միավորային գնահատում։

Տնային աշխատանք- ուսումնասիրել պատմական դեպքերը այլ սկզբնաղբյուրներից։

Քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն

Բանավոր հարցման գնահատման ռուբլիկ

1.Տիրապետում և վերարտադրում է թեմայի ամբողջ բովանդակությունը4 մ.

2.Կարողանում է կատարել վերլուծություններ և տանել զուգահեռներ3 մ.

3.Ունի դիրքորոշում հարցի վերաբերյալ3 մ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտության արդյունքում կարելի է գալ հետևյալ եզրահանգման, ժամանակակից ուսուցչի խնդիրն է ապահովել որակյալ կրթություն,աշխատել անմնացորդ նվիրվածությամբ, յուրաքանչյուր աշակերտի ընդունել սեփական երեխայի նման, վերաբերվել ինչպես արդեն ձևավորված անհատականության, երաժշտության միջոցով աշխատել երեխայի հոգեկերտվածքի վրա, հասկանալ նրա հույզերն ու զգացմունքներն ու ճիշտ մոտեցում ցույց տալ: Նրանցից յուրաքանչյուրի ներաշխարհը բացահայտելով, փնտրել, գտնել նոր ձևեր, մեթոդներ դասը ճիշտ և գրագետ կազմակերպելու համար 'օգտագործելով վերը նշված բոլոր գործիքները: Դասի պլանավորմամբ պայմանավորված աշխատանքային հմտությունները փորձել հասցնել կատարելության մակարդակի: Այս առումով խիստ տեղին է մեջբերել Մեծն Կոմիտասի խոսքերը:

Զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցեք դաստիարակության գործին, խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Սխալ ուղղությամբ ազգ մը կխորտակեք վերջը: Սույն աշխատության նպատակն է առաջարկվող հետաքրքիր մեթոդների, հնարների կիրառման միջոցով դասի ընթացքը դարձնել ավելի ակտիվ, մասնակցային,խրախուսել վերլուծական , քննադատական միտքը աշակերտների շրջանում: Ուսուցիչը հստակ պետք է իմանա կրթության բովանդակության մասին ինչ սովորեցնել, ինչպիսի նպատակներ է հետապնդում կրթության բովանդակությունը, ինչու սովորեցնել և քաջ տիրապետի ուսուցման մեթոդիկային ինչպես սովորեցնել :Ամենօրյա պարտադիր կազմված դասապլանները,այսօր ուղեկից պիտի դառնան ուսուցչին և լինեն հաջողված աշխատանքի լավագույն գրավականը: Իսկ դասապլան կազմելու և ճիշտ դասը վարելու արվեստը գլխավորապես կախված է ուսուցչի վարպետությունից: Նույնիսկ փորձառու գիտակ մանկավարժը չպետք է անտեսի այն և պետք է կազմի ու իր մոտ ունենա դասի ամենօրյա պլանը,որով էլ նա կառաջնորդվի դասի ընթացքում : Ուսուցիչն է այն խթանը, որը սովորողների մոտ առաջացնելու է հետաքրքրասիրություն,ցանկություն սովորելու, միշտ կատարյալ լինելու ձգտում,մրցունակություն գիտելիքների շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հետազոտությունների գրականություն

Ընդհանուր մանկավարժագիտության նոր դասընթաց Հեղինակ. Սերգեյ Մանուկյան Երևան 2005թ

Ուսուցման տեխնիկական միջոցները դպրոցում Ա. Խ. Գրիգորյան Երևան 1989թ.

Педагогика школы (Москва 1977г.)

Авторский коллектив Г. И. Шукина; М. Г. Казакина; Т. К. Ахаян Դպրոցը և պրոֆեսիոնալ կողմնորոշումը Ա. Ա. Լալայան Երևան 1977թ. Դասղեկ Ն. Ի. Բոլդիրև Երևան 1974թ.

Մանկավարժության դիագնոստիկա Երևան 2020թ.